

ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Սակայն ճշմարիտ առաքինութիւնները կախում ունին Աստուծոյ շնորհքէն ու անով կ'արդիւնաւորուին, իսկ Աստուծոյ շնորհքը կը պարգեւուի Քրիստոսի չարչարանքներու արդիւնքէն: Ուստի ճշմարիտ առաքինութիւնները միայն Քրիստոնեաներուն մէջ կը գտնուի եւ միայն քրիստոնեաներն են ճշմարիտ առաքինի, որովհետեւ առանց Աստուծոյ շնորհքին, այսպիսի բարոյական գործեր բնական գործողութիւններու պէս բաներ կը համարուին (իսկ բնական ճանապարհով ոչ ոք կրնայ երթալ դէպի գերբնական երջանկութիւնը), ուստի ապարդիւն կը դառնան Ամէնասուրբ Երրորդութեան երանական փառքը ստանալու համար:

Աստուծոյ արքայութիւնը ժառանգելու համար կարեւոր է շնորհքը, որ կը բխի Քրիստոսէն ուրեմն՝ Ս. Երրորդութեան ու խօսքի մարդեղութեան հաւատքը չունեցողը ճշմարիտ առաքինի չէ, որովհետեւ կարող չէ ընդունիլ աստուածային շնորհքն ու անոր արժանի ըլլալ, հետեւաբար եւ Աստուծոյ երանական փառքը ժառանգել: Ուստի ամէն ինչէն առաջ պէտք է Քրիստոնէական ճշմարիտ հաւատքը ունենալ եւ ապա առաքինական ունակութիւններն ու բարի գործերը:

Թէեւ Քրիստոսէ առաջ բնական ու գրական օրէնքով շատերը հաճոյացան Աստուծոյ, սակայն ոչ՝ առանց Քրիստոսի շնորհքին...

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Հաւատացեալ կնոջ մը վկայութիւնը:

Խեղճ այրի մը կը գրէ. «27 տարիէ սարսափելի հիւանդութեամբ մը կը տառապիմ: Որքան գիտեմ, կախարդութեան հետեւանք է: 26 տարեկանիս հիւանդացեալ եմ. հիմա 53 տարեկան եմ: Լման 27 տարի կ'ընէ, որ Սատանան կը տանջէ մարմինս ու հոգիս: Դպրոցի մէջ շատ կը սիրէի կրօնի դասերը եւ մանուկ տարիքէս դէպի Աստուած հակում ունէի: Շատ մը բանաստեղծութիւններ եւ աստուածաշնչական պատմութիւններ կը յիշեմ: Յետոյ երկար ժամանակով Սատանան զիս կը տանջէր: Ո՛ւր ալ ըլլայի, կը կը վախցնէր ու կը չարչարէր: Բոլոր այս տարիներու ընթացքին վախն ու տրտմութիւնը միշտ կը ճնշէն զիս: Երբեմն կը թուի, թէ կը խելագարիմ: Միաժամանակ՝ մարմինս ալ սարսափելի հիւանդ է: Սրբաբապիղծ մտածումներ զիս կը տանջեն մահու չափ: Միշտ ալ պայքարեր ու պաշտպանուեր եմ աստուածաշնչական ոտանաւորներով, որոնք գոց գիտեմ: Ուրիշներէն ալ թախանձագին խնդրեր եմ որ ինծի համար աղօթեն: Բայց մինչեւ հիմա որեւէ բան օգտակար չեղաւ: Հրաշալիօրէն զիտեմ, որ զիս կապող շղթաներէն միայն Աստուած կրնայ փրկել: Ան ունի այդ իշխանութիւնը. բայց երբ պիտի ըլլայ ատիկա»:

Ի՛նչ ահաւոր է...

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐՈՂԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՆԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

ԿԻՐԱԿԻ՝ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2012

ԹԻՒ 39

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 10.1-12

Բ. ԶԿՆԻ ԽԱԶԻ

Յիսուս կափառնայումէն Հրէաստանի կողմերը եկաւ՝ Յորդանան գետին միւս կողմէն անցնելով: Դարձեալ խուռն բազմութիւն մը իր շուրջը հաւաքուեցան եւ Յիսուս սկսաւ անոնց ուսուցանել իր սովորութեան համաձայն:

Փարիսեցիները զինք փորձելու նպատակով մօտեցան իրեն եւ հարցուցին. «Ոեւէ մէկը իրաւունք ունի՞ իր կինը արձակելու»:

Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց»:

Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն»:

Յիսուս ըսաւ. «Մովսէս ձեր անհանդուրժող նկարագրին պատճառով այդ օրէնքը սահմանեց ձեզի: Մինչդեռ սկիզբէն՝ ստեղծագործութեան ժամանակ, Աստուած արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ. "Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան": Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուստի ոեւէ մէկը թող չբաժնէ անոնք՝ որ Աստուած միացուց»:

Երբ տուն դարձան, աշակերտները նոյն նիւթին մասին դարձեալ հարցուցին: Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ այրը արձակէ իր կինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր դէմ: Նոյնպէս ալ, կինը եթէ ձգէ իր ամուսինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

ՇՆՈՐՀՔ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ

Ամենախնամ եւ միշտ ողորմած Տէր, քու անսահման բարեբարութիւններուդ վրայ՝ նաեւ մարդոց պարգեւեցիք աստուածաշունչ Կտակարաններուդ մէջ դրոշմուած նշմարիտ օրէնք, որպէսզի անկէ տրվելով քու սուրբ կամփիդ արտացոլացումը եղող պատուիրաններդ, գանձով կատարենք միշտ քու կամփիդ համաձայն, մեր հոգիներու փրկութեան եւ օգուտին համար:

Կ'աղաչե՛մ, Տէր, իմաստութեանդ լո՛յսը ծագէ եւ վերանորոգող հօգի Հոգիիդ շնորհները թափէ իմ խաւարած հոգիիս մէջ, եւ իմ մտքիս մէջ դրոշմէ աստուածային երկիւղը եւ ջերմեղանդութիւնը, որպէսզի արժանի կերպով կարգաւ աստուածաշունչ քու Մատեանդ, բարեպաշտ հաւատքով ու յարգանքով եւ յօժար սրտով ու սիրով ապահով զնեմ անոր մէջ պարունակուած բոլոր խօսքերուն: Տո՛ւր ինծի նաեւ շնորհքը՝ աներկմիտ հաւատքով հաւատալու եւ ընդունելու անոր մէջ բովանդակուած նշմարտութիւնը, որպէսզի անխախտ յոյսով ապաւինիմ խոստացուած բարիքներուն, շնորհներուն եւ յաւիտեանական կեանքին՝ Սուրբ Հոգիիդ շնորհովը. որուն փա՛ռք յաւիտեանս: Ամէն:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՍԻՄԷՈՆ ՍԻՒՆԱԿԵՑԻ



Արդեօք լսած էք այս անունը, կամ այս սուրբին մասին: Նախքան ծանօթանալը յիշենք թէ մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Սիմէոն Սիւնակեցիի տօնը այս տարի կը զուգադիպի Երկուշաբթի՝ 24 Սեպտեմբերին:

Սուրբացի սուրբ մը, որ սիւնի մը գագաթին վրայ անցուցած իր արտասովոր ճգնական կենցաղին համար աշխարհահռչակ դարձաւ: Աղբատիկ ծնողքի զաւակ, ան իր կեանքը անցուց նախ վանքի մը մէջ, երկար ատեն ապաշխարութեան զրկանքներու ենթարկելով ինքզինքը: Երեսուներկու տարեկան հասակին ստացաւ իր հոգիին սրբացման կազմաւորումը իր աղօթանուէր ճգնութեամբը, քարէ սիւնի մը բարձունքին վրայ՝ ուր յարատեւաբար մնաց ամբողջ 37 տարիներ, մինչեւ իր մահը (459): Ան հետզհետէ անեցուց սիւնին բարձրութիւնը, որուն վրայ երեսուն տարիներէ ի վեր ապրած էր եւ իր մեռած ատեն, վախճանը ոտք բարձր էր:

Սիւնին կատարը տափակ էր, երեք ոտք տրամագիծով: Անոր վրայ կը մնար կանգուն, ծնրադիր կամ նստած, բայց առանց պառկելու: Ծոմապահութիւնը անհաւատալի ըլլալու չափ խիստ էր. ամբողջ Մեծ Պահոց ընթացքին ոչինչ կ'ուտէր: Սիւնը հաստատուած էր բլուրի մը վրայ, ի Սուրբա կամ ի Կիլիկիա, ու ժողովուրդը ամէն օր կը խոնուէր անոր բոլորտիքը, իրմէ աղօթք խնդրելու կամ իր քարոզները լսելու համար: Իր կեանքը տեսակ մը հրաշք եղաւ իր ապրած դարուն մէջ եւ առարկայ՝ ամէնուն զարմանքին:

Նայելով Թէոդորիտոս պատմագիրին եւ ուրիշ մատենագիրներու, իր մասին պատմութիւնները կրնանք ընդունիլ իբրեւ իրականութիւն:

Կը շնորհաւորենք Սիմէոն անուն կրողներու անուանակոչութիւնը:

ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՔԱՌԱՄԵՐՆԱՅ ԸՆԾԱՅՈՒՄԸ

Մանուկ մը ծնելէն 40 օր ետք եկեղեցի կը տանինք սակայն գիտենք ինչո՞ւ համար, եկէք իմաստը հասկրնանք:

Ի հետեւումն Հին Կտակարանի, մանուկը ծնելէն ետք, մայրը գինք 40-րդ օրը տաճար կը տանի ծննդեան անմաքրութենէն սրբուելու եւ մանուկը Աստուծոյ ընծայելու համար (տե՛ս Ղեւտ. 12.6-8): Այս օրէնքին սահմանադիրը Աստուած ինքն է՝ Հին Ուխտի Եկեղեցիին մէջ, որ Քրիստոսի վրայ ալ կատարուեցաւ: Այդ պատճառաւ, Նոր Ուխտի Եկեղեցին ալ տնօրինեց այդ մէկը կատարել, ո՛չ միայն անդրանիկներու պարագային, այլ՝ բոլոր նորածիններուն:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Եթէ մեղքերուդ համար թողութիւն կ'ուզես, հրաւիրէ որբերը, այրիները, վշտահարները, տառապածները, դժբախտները, անդամալոյծները, կոյրերը, կաղերը, կարիքաւորները, բանտարկեալները, բոլոր անօթիները եւ անմըխթարները. միթա՛րէ՛, սփոփէ՛ եւ կերակրէ՛ զանոնք. միայն անոնց ծառայէ, անոնց շո՛ւրջ դարձիր, ուրախացո՛ւր եւ պատուէ՛ զանոնք՝ քաղցր խօսելով, որպէսզի մեղքերուդ թողութիւն եւ տանգ փրկութիւն ստանաս: Այսպէս կազմակերպէ՛ քո ընդունելութեանդ հրաւերները եւ աղատներուն ու թշուառներուն հրաւերին մէջ հարուստները եւ բարձր դասակարգը նկատի մի՛ ունենար, որպէսզի անոնք, (աղատները) նախագահեն ու անոնք ըլլան առաջինները. անոնք թող նստին սեղանին վերը եւ վարը. միայն զանոնք ներս հրաւիրէ աղաչանքով եւ նամբո՛ւ դիր աղերսանքով: Եթէ այսպէս հիւրընկալես, ոչ թէ տուած՝ այլ առած կ'ըլլաս. քչ թէ ծախած՝ այլ մեծ շահ մը ապահոված ու նաեւ թողութիւն ստացած կ'ըլլաս: Ասոր համար էր որ Քրիստոս կ'ըսէ. «Երբ հրաւիր կու տաս, հարուստները մի՛ կանչեր» որպէսզի անոնց տրուած ուշադրութեան պատճառաւ աղատները արհամարհուած չզգան եւ դուն, քո կողմնակալութեանդ պատճառաւ չդատապարտուի որպէս օրինազանց մը, նման անոր որ կ'ըսէ. «Ան որ գեղեցիկ հագուստներ հագած է, պէտք է անոր ըսէք. պատիւ ըրէ՛, այստեղ նստէ՛» իսկ աղատներուն պիտի ըսէք. «Գնա՛ եւ սանդխամատին ծայրը նստէ՛» ու այդպէս ընելով չար մտածումներու դատաւոր պիտի դառնաք, որովհետեւ, հարուստները ընդունելով մեղք կը գործէք եւ դուք իբրեւ օրինազանցներ կը մեղադրուիք օրէնքով:

Յովհան Մանդակունի Ճառք

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՔԱՂՅՐՈՒԹԻՒՆ

Քու սիրած կնոջդ հետ կեանք վայելէ քու ունայնութեան կեանքիդ բոլոր օրերուն մէջ... վասնզի այս կեանքին մէջ քու բաժինդ անկաւ է: Ժող.9.9:

Ընտանիքը այր մարդուն սրբութիւն սրբութեանց է երկրի վրայ: Տան որմերէն ներս անկա ինքզինք կը գատէ դուքսի աշխարհէն եւ դուրը կը գոցէ իր եւ իրեններուն վրայ: Հոն կ'ամբարուին իր ուժերը, կը նորոգուի իր եռանդը եւ կը գտնէ իր հանգիստը աշխատանքէն: Հոն է սրբավայրը իր հոգեւոր խոկումներուն, որոնցմէ ներշնչուած՝ ան կը ստանձնէ բոլոր իր գործունէութիւններն ու պայքարները դուքսի աշխարհին հետ:

Ընտանիքը այն վայրն է, ուր սէրը կը բնակի: Սէրը հոն չի գիշերեր միայն, պատահական այցելութիւններ չի տար եւ ոչ իսկ հոն մնայուն հիւր է ան: Սէրը տան գիտաւոր դրան բանալին ունի, տէրն է անոր ամենակարեւոր անկիւնին, ուր կը տաքցնէ անկէ տան բոլոր մթնոլորտը: Ընտանեկան օճախը կամ տունը կրնայ արքայական շքեղ պալատ մը ըլլալ կամ աղքատ մարդուն պարզուկ խրճիթը: Հարստութեան մատուցած բոլոր առաւելութիւններն ու դիւրութիւնները չեն կրնար տալ ինչ որ սէրը կու տայ այդ տանը եւ սակայն սէրը պարզ եւ աղքատի խրճիթին կրնայ տալ բոլոր երջանկութիւնը, ազնուութիւնն ու քաղցրութիւնը՝ որոնք կ'ապահովեն այր մարդուն եւ բոլոր ընտանիքին նշմարիտ ու երկնային հանգիստը երկրի վրայ՝ անկիւնի մը մէջ որ ընտանիք կը կոչուի:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
14.3-17

Այն օրը Տէրը վերջ պիտի դնէ քու ցաւերուդ, նեղութիւններուդ եւ գերութեան անտանելի ծառայութեանդ, եւ պիտի հանգստացնէ քեզ: Այն օրը հետեւեալ ողբանման առակը պիտի կարդաս Բաբելոնի թագաւորին վրայ, ըսելով.- «Ի՛նչպէս կորսուեցաւ բռնատրը, ի՛նչպէս կորսուեցաւ աշխարհը ցնցողը:

Ահաւասիկ Տէրը խորտակեց մեղաւորներուն լուծը, լուծը իշխաններուն, եւ անխնայ եղաւ անոր հանդէպ՝ որ կատաղի մոլեգնութեամբ եւ անտանելի տանջանքներով ազգերը կը կոտորէր:

Ամբողջ աշխարհի խաղաղեցաւ եւ հանգստացաւ. մարդիկ ուրախութեամբ կ'աղաղակէն: Լիբանանի եղեւիններն ու մայրիներն ալ կը ցնծան եւ կ'ըսեն. «Այն օրէն որ դուն կորսուեցար՝ ռեւէ փայտահատը չեկաւ մեզ կիրելի»:

Դժոխքն իսկ տակնուվրայ եղաւ երբ դուն հոն իջար. միանգամայն ելան կանգնեցան աշխարհակալ բոլոր հսկաները, որոնք ազգերու թագաւորները իրենց աթոռներէն վար ձգած էին:

Բոլորը միասին ըսին քեզի. «Դո՛ւն ալ մեզի պէս բռնուեցար եւ մեր վիճակին ինկար:

Քո՛ւ ալ փառքդ գերեզման իջաւ եւ ուրախութիւնդ քաղուեցաւ: Այսուհետեւ ցեցերը քեզի ներքնակ պիտի ըլլան, իսկ որդերը՝ վերմակ»:

Ի՛նչպէս ինկար երկինքէն, ո՛վ Արուսեակ, որ առաւօտուն կը ծագէիր. ի՛նչպէս գետնին հաւասարեցար, դուն՝ որ բոլոր ազգերը ոտքի տակ առած էիր:

Շարունակել
Աստուածաշունչէն

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱՄԱԿԸ
ԿՈՐՆԹՈՍԻՆԵՐՈՒՆ
10.18- -11.10

Իսկական ընտրուածը ան չէ՛ որ ինքզինք կը գովէ, այլ ան՝ որ Տիրոջ կողմէ կը գովուի: Սակայն, յուսամք իչ մը ներողամիտ կ'ըլլաք եթէ անմտօրէն ես ալ պարծենամ, ըրածներս յիշեցնելով ձեզի: Իսկ դուք համբերութեամբ լսեցէք:

Ես ձեզի հանդէպ Աստուծոյ նախանձախնդրութեամբ լեցուած՝ կ'ուզեմ որ միայն Քրիստոսը սիրէք, ինչպէս մաքուր կոյս մը որ իր սերը կը վերապահէ անոր որ իր ամուսինը պիտի ըլլայ: Բայց կը վախնամ որ ձեր միտքը ապականի եւ հեռանաք Քրիստոսի հանդէպ ամբողջական եւ մաքուր նուիրումէն, ճիշդ ինչպէս Եւան խաբուեցաւ օձին խորամանկ սուտերէն: Կը վախնամ որ նոյնքան դիրութեամբ ընդունիք ռեւէ մէկը որ մեր քարոզածէն տարբեր փրկիչ մը, ձեր ստացած Հոգիէն տարբեր հոգի մը, կամ ձեր ընդունած Աւետարանէն տարբեր ավետարան մը կը քարոզէ ձեզի:

Չեմ գիտեր թէ ես ձեր այդ նշանաւոր «առաքեալ»ներէն բանով մը ետ կը մնա՞մ: Թէ՛ եւ ճարտար խօսող մը չեմ, բայց խօսածս գիտեմ: Եւ կարծեմ ատիկա ապացուցանեցի ձեզի ամէն ինչով: Արդեօք սիսա՞լ ըրի որ Աստուծոյ Աւետարանը ձրիօրէն քարոզեցի ձեզի եւ ինքզինքս խոնարհեցուցի՝ ձեզ բարձրացրնելու համար: Չեով մը միւս եկեղեցիները կողոպտեցի, ապրուստս անոնցմէ առնելով, որպէսզի ձեզի ծառայեմ ձրիօրէն:

ՀԱՐՈՒՄԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑՄՆՈՒԹԻՒՆԸ
ՍՍՏՈՒՄԾԱՇՈՒՄԻՆ: